

Գրական Թերթ

ISSN 1829-1627

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ * ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1932-ԻՑ

Տղազրվում է ՀՀ Մեակույթի նախարարության աջակցությամբ

www.grakantert.am



Զինադա ԲԱԼԱՅԱՆ


Ստեփանակերտ, 30.10. 2020 թ.
N նկուղ, խիզախ ժամերին՝

Հեքիմյան 11/60-ից հայացքս հառած դեպի արևա-վառ, լուսատենչ ու մռայլ՝ խորին լռության մեջ մարտավոր-ված, արքայատեղիին՝ 1000-երորդ անգամ քրքրված, բայց վեհորեն կանգուն, հարսանքավորներին համբուրող ու հաղթանակի օրհնանքներ շրջող Սուրբ Ղազանչեցոցին, ՇՈՒՇԻՒՆ, ԱՐՑԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ՝ ՀՁՈՐԱԶՈՐ, ՄԱՐՏԵՂԵՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՎ ՊՍԱԿՅԱԼ...



Բոլոր խրամատները տանում են դեպի հաղթանակ

Համաճարակի ու պատերազմի սև մագիլների մեջ է հայտնվել Հայաստան աշխարհը: Իրադրություն, որ Հովհաննես Թումանյանի խոսքերով ասած՝ «Ետևը՝ սո՛ւր, առաջը՝ ջուր» է, սակայն այս անգամ չկա գաղթելու «Անցե՛ք» սարսափազդու հրամանը, այլ կա ամեն հայի ներսից բխող ոգեղեն դողանջ՝ «Հաղթե՛լ»:



Հակոբ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայոց լինելության ինքնապաշտպանական գենը նորից բոլորին միակամ է դարձրել ու կենտրոնացրել Հայրենի Արցախ ճակատում, որտեղ գիտակցվում է ժամանակի հրամայականը՝ մեր ազգային գոյության լինել ու չլինելը:

Կամքի, տոկունության, սխրանքի ժամանակներ են. ամեն մեկս իր բաժին կյանքով մահը պիտի հաղթի, քանի որ մեր նախնիների արժանավոր

ՄՈՒԵՓՆՈՂ ԳԵՆ

ժառանգներն ենք, և մեզ է վստահված ազգի շարունակականությունն արժանապատվորեն պահպանելու նվիրական գործը:

100 տարի առաջ Ղազար պապս կամավորագրվել էր Հայոց ազատագրական պայքարին՝ ըմբռնելով՝ «միայն զենքով կա հայի փրկություն»: Այսօր որդիս է կամավորագրվել Արցախյան հայրենականին, որովհետև գիտակցում է՝ իր բազկի ու մտքի ուժն է ծնում, որքան որ զարմանալի է, 21-րդ դարում հայ ազգի ապրելու իրավունքը և ընդհանրապես նրա հարատևությունը: Մահապարտ պապիս մարտական ոգին որդուս հանել է մարտի, իսկ երեք տարեկան թոռնիկիս ամեն օր զինվորական քայլքով կրկնել է տալիս՝ «Հաղթելու՛ ենք, հաղթելու՛ ենք, հաղթելու՛ ենք»:

Այսօր յուրաքանչյուր նահատակի, յուրաքանչյուր մարտնչող զինվորի, յուրաքանչյուր թիկունքականի ազնվական կապույտ արյամբ է գրվում ազգիս վիպական տարեգրությունը: Ու ճիշտ ժամանակն է մեղանչած զավակներիս ապաշխարելու համար: Եվ այս պահին բնավ կարևոր չէ՝ աշխարհին իր մեղքերը կապաշխարի՞, թե՞ ոչ, քանզի մեր պատմությամբ արդեն սերտել ենք, որ նա ուժեղներին է հարգում, իսկ թուլերին լոկ խղճում ու լավագույն դեպքում՝ իր ավելցուկը ողորմում, ուրեմն ավելի ամուր լինենք ու առնական:

Հերոսության ժամանակներ են, ու ես հպարտորեն լսում եմ ազգիս համախմբված հզոր ձայնը՝ հաղթելու՛ ենք: Այո՛, այո՛, հոգու անասելի դողով լսում եմ ազգիս կապելլան.

Թները խաչիդ գրիչն ու սուրն են,
Բեկանող շանթեր, խոյանքը՝ ոգի,
Որ ուղի է սուրբ արարչագործի...

...ու մեկ էլ նորից սրտեր թնդացնող՝ հաղթելու՛ ենք, քանի որ զինվորի բոցերի վրա քայլող է և պաշտպանն է Հայոց հավերժող գոյի:

Ինչ խոսք, ժամանակները ոգեղեն են ու մարտակոչի, իսկ հաղթանակի ճանապարհը՝ դյուցազնական ու էպիկական:

Արցախամուր աշխարհից մարտական խապրիկներ

08:39, հինգշաբթի, 29. 10. 2020 թ.

Պատերազմ է... գեհեն ու... տագնապ...

...Երբ գիշատիչների խմբի քիթն ու մռուռը արնոտվում է, վայրենի ու հրաբորբ, արնատենչ գալարումներ է արձակում, երկաթե կարկուտ սփռում չորսդին, հոխորտում, փորձում ահաբեկել անվախներին, փորձում փոխ առած այլադեմ ձագերով, վարձկաններով, որկրամուլ բնագղներով, հազարամյա վայրենի ժանիքներով ահասարսուռ դնգոնգալ... ամեհի ցունամի է հիշեցնում, բայց հաստատ դրանից հենց ինքն է սարսափ ապրում, ոչ իմ Ստեփանակերտը, որ լուռ է այդ հոխորտանքների դեմ: Գիշատիչ վարձկանների խումբը արկահեծ լինելով հայոց առյուծներից, գազազում՝ նորից ու նորից սարսափ է հրաբխում չորսդին...

Քաղաքն իմ՝ նախշ-նախշքար, խրոխտ ու վիրավոր, բայց դյուխական՝ լուռ է մեծ լռությամբ, իսկ չորսդին անվերջանալի տագնապի սուլոցների, սմեղչների զարկերի տարափի տակ դիմակայում է իր անվեհեր ժողովրդի պես...

14:38, 29. 10. 2020 թ.

...Իսկ իմ Արցախամուր ու դարավոր լեռները, անդնդախոր ձորերն, ինչպես միշտ, խրոխտ ու համառ են, հարմար պահին իրենց խորշերը գերեզմաններ կդարձնեն՝ կլանելու անկոչ վարձկաններին, իրենց համառ մարտիկների հետ մարտ մարտի կելնեն օջախ ու ծովս կտրողներին, հայրենի սրբությունները պղծողներին, մարդակերպ գազաններին շանսատակ անելու, կլանելու նրանց անհետ իրենց անդնդախոր կիրճերում, գահավեժներում...

Անիծվե՛ս դու, պատերա՛զմ, անիծվե ու հավիտյանս պարտվե ողջախոհներից, ազատատենչներից, հայրենիք ու օջախ պաշտողներից, արիական ժողովուրդներից, անիծվե՛ս՝ 1.000.000 պորտով էլ անդին գեհենվես...

Ոխակալ ու զագրելի, երկաթե բնագղներով ոխակալո՛ւ պատերա՛զմ... Անիծյա՛լդ անիծվածների դնչակալներով... Հոխորտում ու անագգ վարձկաններով հին խաղիդ կանոններն են փորձում խաղալ այս աստվածաստեղծ հողում, ուր մարդկության

Շարունակությունը՝ էջ 2

ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄՐՑԱՆԱԿԸ՝ ԳՐՈՂԻ ԱՅՐՈՒՆ ԵՎ ՈՐԴՈՒՆ

Հոկտեմբերի 28-ին Հայաստանի գրողների միությունում տեղի ունեցավ Հրանտ Մաթևոսյանի անվան մրցանակի հանձնումը:

Մրցանակակիրներն էին Հրանտ Մաթևոսյանի «Անտիպներ» երկհատոր-

յակի կազմողներ Վերժինե Մովսիսյանը և Դավիթ Մաթևոսյանը: Մրցանակները հանձնեց ՀԳՄ նախագահ Էդվարդ Միլիտոնյանը:

Նա խոսեց Հրանտ Մաթևոսյանի և նրա ստեղծագործության մասին, ասե-



լով, որ Մաթևոսյանը մշտապես ապրում է, արդիական է և համամարդկային:

Դավիթ Մաթևոսյանը, ստանալով մրցանակը, շնորհակալություն հայտնեց՝ նշելով, որ դեռևս կան Մաթևոսյանի անտիպ ստեղծագործություններ, հատկապես նամակներ, որոնք հետագայում կիրատարվեն:

Սեփ. լրտ.

Սկիզբը՝ էջ 1 նախաժամանակներից ապրել է Արցախն ու արցախցին՝ հայության անկոտրում կորիզներից մեկը... Քանի դար ու ժամանակներ նույն խաղերն են փորձում խաղալ՝ հին ու արնախում խաղամուկի պես... Անիծվե՛ք դուք, պատերազմի մոգեկիրներ, պատերազմի հրձիգներ...

15:38, 29. 10. 2020 թ.

N նկուղ, Ստեփանակերտ

Հայտնի ու անհայտ, ներկա ու նահատակ իմ ՔՐԻՍՏՈՍՎԱԾ ԾԱՂԻԿՆԵՐԻՆ՝ **Տունդարձի կանչերով՝ ՀԱՅՈՑ ՀԵՐՈՍԱԾԻՆ ՄԱՅՐԵՐԻՑ**

Տղաներ, իմ ամրակուռ, աներեր, քաջակորով մարտիկներ, տղաներ ի՛մ անզուգական, Հայոց Արցախի սահմաններին զինվորագրված Արցախանախշ մարտիկներ, հողոտ ու հողաբույր մարտիկներ... Ձեր մարտն այլևս ազնվորդիներինն է, հեռուներում, Արցախա կապտակոհակ երկնամերձերում սուրացող սրաթռչիք արծիվների պես կտուրաք, Կանդ արծիվներս, ձեր հոգուն, ձեր եռքին, ձեր ծորացող վառուղաբույր քրտինքին մատաղ, ձեր ցավից, ցասումից, կարոտից ճաքճաք շուրթերին մատաղ, արծիվներս, որ չեք երկնչում մահապիտու վարձկաններից, այլ պատժում ու ցաքուցրիվ եք անում, ջնջխում նրանց, մարտ մարտի եք ելնում՝ հանուն հայրենյաց, մարտ մարտի եք ելնում՝ վախկոտ ու արնատենչ ոսոխներին հողմացրիվ անում... Նրանք՝ այդ ցմփոր ու խաբված, խփնված վարձկանները, գալիս, հա՛ գալիս են, Դուք՝ հզորներս, նրանց ջարդում, հա՛ ջարդում եք, ես ձեր ազգածին իմաստությանը, բազկին ու կորովին, քաջությանը մեռնեմ...

Օրո՛ր-օրո՛ր, իմ Նախշ-Նահատակներ, ձեր պաղ ու հայրենանախշ մարմիններին մատաղ...

Օրո՛ր իմ թևաթափ արծիվներ, հայրենյաց աննկուն պաշտպաններ, ամեն մեկդ Հայոց տան անմար ճրագներ... **Դուք իմ Քրիստոսի Քրիստոսված ծաղիկներ՝ սրբասուրբ ու մատունքված անմահ մարտիկներ...** Դուք իմ Արցախամուր աշխարհի աներեր, սառամարմին ու դիակալ զարկերից գնդակահունձ Պաշտպաններ, այժմ և միշտ, հավիտենից ներկա Արցախա ժամանակներում, Հայոց Արցախի սահմաններին որդեգրված մարտեղեն հերոսներ, ազգության նահատակված կերոսներ, հավերժաբեր **ԱՐՑԱԽՈՐԴԻՆԵՐՍ...**

Օրո՛ր-օրո՛ր, իմ Կանդ արծիվներ, անհայտության մեջ պեծկլտացող ձեր կանչերին, ձեր պա՛ղ-պա՛ղ, քրքրված մարմիններին մեռնեմ, ձեր վերջին լուսաբարկին մեռնեմ, կերոսներս...

Օրո՛ր-օրո՛ր, իմ անպարտ Դյուցազուններ...

17:04-18.00, 29. 10. 2020

N նկուղ, Ստեփանակերտ

Գիշերն այս մահ ու ավեր էր հրաբխում, գիշերն այս չորսդին երկաթաշեն հրեշներին դավադիր և ոնկնդիր՝ հարցումներ էր անում հեռուներում դրդաբացող ամենակուլ ժամանակին...

Արծիվներս մարտեղեն, ձեր հուժկու հարվածներից այլայլված, անբարո թշնամին փորձում է ոխ հանել զարմանահարաշ, մարտեղեն իմ Ստեփանակերտից, որ անպարտ ոգի ունի, անվեհեր զորավարի պես դիմացկուն է ու մարտահրավերներ է նետում անկոչ ոսոխին... Թշնամին արկահարում է, հա արկահարում՝ պարտվողի հոգեվարքի վերջին նշաններ արձանագրելով...

Թշնամին արկահարում է դրախտավայր ու ծաղկուն գյուղերս, մարդկային և բազմաբնույթ կորուստներ պատճառում, արնատենչ ոխ թափում ամենուր, հրդեհաբեր կարկուտ թափում թավ անտառներին՝ այրելու մոլուցքով տարված, բայց... հատուցման ժամերը չեն ուշանում՝ դնգստվում է հայոց աներեր քաջերից...

Արցախամուր աշխարհից մարտական խապրիկներ

05:29, 28. 10. 2020 թ.

N նկուղ, Ստեփանակերտ

Աքլորականչը պարտադիր հնչեց՝ ազդարարելով մոտալուտ լուսադեմին սպասվող թշնամու նենգության վավերագիրը՝ հնչած ժամանակի պարույրներում: Արցախում աքլորներն էլ մարտական դիրքերում են, ազդանշան տվող խորհուրդով: Ահավասիկ...

Ցայգ ու այգերիս բարի՛ լույսն այսօր նորից հայտնվեց թշնամու արկահարումների թևերին... Դրսում երևացող հատուկենտ անցորդներ միանգամից հոսեցին բոլորին հյուրընկալող նկուղները...

Այգաբացը ծվլլոցներով համերգող խիզախ ծիտերը ևս, մարդկային հազվագյուտ երևացող հայացքների քնքշանքից ուրախ թռչկոտելով և ակնթարթորեն սթափվելով՝ հուժկու արկահարվածներից, անդին պախկվեցին: Շոյանքով-շորորանքով թափառող կատվազգիները, մեկեն վախվորած ու զարմացած նիրհից արթնացող աշխարհի և երկաթ ու արճիճ հրաբխող ժամանակի սառը, անհյուրընկալ պահվածքից, այլայլված մարմիններով, արագավազ թաքսոտոցներ հասան ու բնագործն մլավում, դողում էին անտերունչ...

Նկուղային գտնվելու իմ վայրը՝ նկուղ-քնակարանը, մի քիչ ավելի խորքում էր գտնվում... Երկրաբանները վրա հասնող աղետների դեպքում կարծես բնազդներով էին շարժվում՝ կենդանակերպվելով: Այդ ակնթարթներին առերեսվեցին վախի մարդկային և կենդանական բնազդները... երկուստեք դժգոհ իրարից՝ սառը հայացքներով բաժանվեցին՝ երկուստեք տրվելով մահաբեր թնյունների բույթ, անհաղորդ ձայնարկություններին...

Իսկ փողոցներում վախից այլայլված վազվզում էր տերերից անտերունչ դարձած շների խումբը՝ հաչերի աղեկտուր խմբերգով ձայնակցելով օդային տագնապի անընդմեջ հնչող ազդանշաններին...

Քաղաքն իմ լուռ, ահագնացած ցատումն իր հոգում դիմակայում ու մարտահրավեր է նետում ձեռ ու ոտից ընկած, վայրենի հրաբուխներ փսխող ոսոխի լկտի շարժումներին: Նրանց անընդմեջ արկահարում էին հայոց քաջերը...

Այս առավոտ ևս, ինչպես ամեն Աստծո լույս օր, ժամը **09.00-ին**, ամրակուռ ու խրոխտ, արծաթնչուն, երկար ու համառորեն խփեցին եկեղեցու զանգերը՝ մարտահրավերի պես ամուր դողանջելով չորսբուրդ: Առավոտ լուսո, տուր երկրիս զորության քո երասաններն անդարձ: Աստծո օրհնանքն ու զորությունը թող իջնի իմ մարտնչող երկրի ուսերին, իմ ժողովրդի այլայլված ժամանակներին... երկնային պատիժ խոստացիր այս անհայրենիք վարձկաններին և պատերազմի հրձիգներին:

18:52

...Մինչև իրիկնամուտ հրետակոծվող քաղաքն իմ լուռ էր մեծ լռությամբ՝ փորձելով վիրակապել վիրավոր մարմինը՝ պատերազմի հրձիգներին անպայմանորեն կործանում խոստանալով...

Իրիկնային բոլորանվեր-բոսորափայլ լուսինը դանդաղասահ իր շողերը սփռեց մարտնչող ու գիշերվա անորոշ խորհրդին ընդառաջող Արցախ աշխարհիս թևերին՝ ժամանակադիր սահանքներով լի հայացքը հանելով հեռուներում մարտի ելած երկրիս չորս ծագերին...

Ձորություն-զորություն տուր երկրիս՝ անմահ, մարտեղեն ԱՐՑԱԽ աշխարհիս ու նրա հզորագոր պահապաններին, Տեր երկնային...

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ ԲԱՆԱԿԻՆ



Գրել չեմ կարող. գրիչս լուվել է: Աչքիս առաջ՝ պատմություններ, ամեն մեկը՝ գրական հանածո, բայց գրել... չի ստացվում:

Այս մի պատմության համար ընդամենը փաստեմ՝ ինչպես իմ փնտրտուքին ի պատասխան, Աղասի Հովհաննիսյանը ինձ գտավ-զանգեց ցանցեր գործելու խնդրով, ինչպես մեկ օրում հավաքվեցին, սկզբում ՀԳՄ կին գրողները, իսկ հաջորդ օրերին եկան ու մեզ հետ մնացին իրենց գործն անող լուռ ու պայծառ աղջիկներ ու կանայք, ու ոչ միայն. վերջին օրերին մեր կողքին էին իսկական տղամարդիկ: Այստեղ անուններ չեմ տա, կներկայացնեմ մի քանի լուսանկար՝ վերն ասվածը վկայող: Հա՛, նաև արդյունքը. ցանցեր 170 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով:

Կարճ ընդմիջումից հետո (ցանցերի ու կտորեղենի ձեռքբերում) մեր աշխատանքը կվերսկսվի:

Կարինե ԽՈՂԻԿՅԱՆ

Գրող-նկարիչները՝ բանակին

Հոկտեմբերի 30-ին ՀԳՄ ճեմարահում տեղի ունեցավ նկարների ցուցահանդես-վաճառք «Գրող-նկարիչները՝ բանակին» խորագրով:

ՀԳՄ նախագահ Էդվարդ Միլիտոնյանը, նախքան ցուցահանդեսին անդրադառնալը, նշեց, որ այս պատերազմական օրերին որոշակի քայլեր արել և անում է նաև Հայաստանի




գրողների միությունը. մասնավորապես՝ Միության շենքի մոտ գտնվող «Նոր գիրք» գրախանութում թե՛ ՀԳՄ-ի, թե՛ գրողների հրատարակած գրքերը դրվել են վաճառքի, որից ստացված ամբողջ գումարը հատկացվելու է «Հայաստան» համահայկական հիմնադրամին, ՀԳՄ Կլոր սրահում քողարկիչ ցանցեր գործելու աշխատանքին իրենց նպաստն են բերում կին գրողները, իսկ Ծաղկաձորի ստեղծագործական տանն այսօր ապաստան է գտել գրեթե 90 արցախցի մանուկ ու կին:



Անդրադառնալով ցուցահանդես-վաճառքին՝ Էդ. Միլիտոնյանը նշեց, որ ներկայացված է գրեթե 30 աշխատանք, որոնց վաճառքից գոյացած հասույթը կփոխանցվի «Հայաստան» համահայկական հիմնադրամին: Ցուցահանդեսը տևելու է մեկ շաբաթ: «Այս գոյապայքարին մեր մասնակցությունը պիտի բերենք զենքով, գրչով ու վրձնով,- ասաց ՀԳՄ նախագահը՝ հավելելով,- Արցախի գոյամարտը մի պայքար է, որն ասես բոլորիս մաշկը լինի, հացի պես բան է հայի համար պայքարելը դարերի մեջ արվեստով, գործողություններով և կովով»:


Բանաստեղծ, նկարիչ Արևշատ Ավագյանը, տեղեկացնելով,



որ Գրողների միությունում ցուցահանդեսներ են կազմակերպվել սկսած խորհրդային տարիներից, նշեց, որ այս անգամ նպատակադրումը բոլորովին այլ է: «Գրչով և վրձնով մենք պայքարում ենք, որ հաղթանակ լինի, որովհետև հաղթանակն իր մեջ պարունակում է մարդկային ուրախության, բերկրանքի զգացողությունները»,- ասաց նա:

Ցուցահանդես-վաճառքին ներկայացված են գրող-նկարիչներ Բակուր Կարապետյանի, Էդուարդ Հախվերդյանի, Սաթենիկ Ղազարյանի, Էդվարդ Միլիտոնյանի, Նանեի, Հերմինե Նավասարդյանի, Արտաշես Արամի և այլոց աշխատանքները:

Շաքե ԵՐԻՑՅԱՆ



ԱՅԴ ՕՐԸ՝ 19.02.2019, ԻՆՁ ՀԵՏԱՊՆԴՈՂ ՊԱՏԿԵՐ-ԱՊՐՈՒՄՆԵՐԻ ՄԻ ՓՈՒՆՁ...

Այստեղ՝ Ծաղկաձորում, Գրողների ստեղծագործական տան խորքում, հանկարծ վերապրեցի-տեսա իմ կյանքից մաքառման մի կտոր (տարիներ առաջ ես աշխատում էի որպես անկախացած Արցախի առաջին ներկայացուցիչ-դեսպան և իմ գրասենյակի պատուհանից ամեն առավոտ տեսնում էի կոնգրեսականների և սենատորների գույնզգույն-խայտաբղետ վերնաշապիկներով հոսքը ինչպես է կոհակվում դեպի չալմայավոր Կապիտոլիում, այդ օրերին Թուրքիան դեռ իր բորենու գարշահոտ երախը չէր մոտեցրել Արցախի և Հայաստանի սահմանին, բայց արդեն կռիվներ էին գնում Արցախում)։

Արտեմ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

որտեղ ցուրտ եղանակի պատճառով ավելի հստակ արձանացած քաղաքական արձաններ կային՝ և՛ հետիոտն, և՛ հեծյալ, որոնց պատմական նախկին տերերը պատմության առաջ անուժ են հիմա. սոսկ պատմական գրքերում են սուր ճոճում, անողոք վճիռ կայացնում, իսկ հիմա խաղաղվել են հանց խոր քնած մանուկ, որ օրորոցում ժպտում է հանկարծ իր մանկական տեսիլքին ընդառաջ...

Նրանք հիմա նման են պատիճից դուրս ընկած կարծր լոբախառնիկի՝ իրենց անցած հզորության քարե ուրվականներ, նրանց պատվանդանի շուրջը՝ սփռված-փայլեցրած գրանիտի վրա, թափառաշրջիկների խմբեր էին թրևում-պտտվում, քնում-արթնանում, ուտում ինչ պատահի, թունավոր սիգարետներ ծխում, որոնք կյանքից դուրս շարտված ամեն տեսակի դժբախտ թափթիուկներ էին, որոնց օրերը հաշված էին Աստծո շնչի տակ...

Նրանք ապրում են հիմա որպես առօրյա արձան, որպես ամենահզորները այս աշխարհում, որպես սոսկ ապրող նյութ տիեզերքում, առանց հավակնելու դառնալ բրոնզաձուլ մարդ, հիմա նրանք քար չեն տալիս իրենց խոցոտված մարմինը պետական հիմնարկների ծաղակին ընդառաջ...

Իսկ մեկը խոսում է դրսում ինքն իր համար, դուրս նետում բերանից մի քանի բառ (կատարում ինչ-որ պատվիրան), որին հանկարծ լուսավորում է արևը, լուսավորում է սենյակում գոսացող մի սեղան կամ կահույքի հանգչող պատառ...

Ատոմային դարում կապույտ ճանճերը բզզում են բաց խառնարանի վրա արևածաղկի գլխիկի, Երկրագունդը հասցնում է գրկել մարգարտածաղկի սլացիկ մարմինը, ինչ-որ մեկը վերցնում է աղքատ կնոջ տոպրակից հնդկացորենի կարծր սերմեր և սփռում թանձր հերկի վրա, տոփանքը մղում է մեկին՝ կտրելու մերկ սենյակը, և գանգրահեր մագերի փունջը իջնում է մարմնի գաղտնի ծալքի վրա...

Ապրում ենք, չէ՞, շարժվում ենք, չէ՞, ցեխոտ փողոցով, դեպի պժգալի խոցոտված քաղաքականությունը կորոնավիրուսի նավթային-մթազնած գիտակցության, ինչպես սփյուռքահայր կասեր. մարդը մնացել է ցավի մեջտեղում՝ ո՛չ աջ, ո՛չ ձախ, և քար չէ տալիս խոցոտված մարմինը պետական անդունդին դեմ առ դեմ, ...որ մարդիկ և վիրավոր թոշունն ու սկյուռը նույնացել են՝ հայտնվելով գաղտնի դիպուկահար-նշանառուի մահաբեր, սև շրջանակի մեջ...

Բայց հենց նույն անելանելի օրը մարդկանց հայտնվում է Քրիստոս-բաժանում շարակնոցի խորհրդավոր պատահիկներ, որոնք ձևափոխելու են ամեն ինչ դեպի բարին, դեպի աղոթք և մանկան անմեղ շարժում...

Վերջում, ինչպես միշտ, գյուղական ցրտաշունչ, բքառատ ճանապարհի վրա, հայտնվում է հալածական նույն արևը՝ հինայած, մեղրագույն շողերը պինդ գրկած..., իմաստներ շռայլելով, ինչպես երկնային ցրիչ՝

ամենքին...

Հայկ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Այս ծանր, սակայն հերոսական օրերին ու շաբաթներին, տեսնելով մեր խիզախ ու անձնվեր զինվորների ոգին ու սխրանքները, ես մտովի վերադառնում եմ Արցախյան ազատամարտի օրերը։ Վերադառնում և վերընթերցում եմ հորեղբորս՝ քանդակագործ, նկարիչ, բանաստեղծ, 1994 թվականին իր 13 ընկերների հետ հերոսաբար զոհված Գևորգ Համբարձումյանի՝ Արցախից ուղարկված նամակները.

«Սիրելիս...

Այսօր մարտի 2-ն է:

Ջինսադար է հայտարարվել և խոսում են, որ նույնիսկ՝ վերջնական: Ուրեմն, սիրելիս, անհանգստանալու ոչ մի հարկ չկա: Խաղաղությունը կարծես հաստատվում է և հաղթանակը մերն է:

Ես արդեն գրել եմ, թե մենք որտեղ ենք գտնվում՝ Աղդամի շրջանի մի կոլեկտիվ ցուցադրական գյուղում, դա մեր հանգստյան տեղն է: Դիրքերը մի ուրիշ գյուղի ծայրում են: Տները լքված են ու անտերուն: Թուրքերը ինչ ցանեցին, այն էլ հնձեցին և մինչև հիմա էլ իրենց խարդավանքներից չեն ուզում ազատվել և դրա համար կհատուցեն ու հարուցում են:

...Ամեն ինչ խաղաղ է և հանգիստ, պարտազմը կարծես ավարտվել է, հրաման կա, որ ոչ մի կրակոց չլինի: Դո՛ւ, սիրելիս, մի ան-



Անպարտելի հայի հավերժական ոգին

հանգստացիր, շուրջով կհանդիպենք և այդ հանդիպումը կլինի մեր ամենաերջանիկ օրերից մեկը:

Կարողել եմ մեր սրտերին և հեռվից ավելի շար է երևում, թե որքան թանկ է մեր ընկերությունը: Տղաներին ասա, որ ես համ իմ տեղն եմ կրակում, համ էլ՝ իրենց: Թուրքերի բոլոր ապարդյուն փորձերը՝ որևէ մի տեղից ճեղքելու, խայտառակ պարտության մատնվեցին, և հիմա իրենց համար նույնիսկ ավելի լավ է, որ սրիպում են զինադարար հայտարարել: Թշնամու մեջ սարսափելի վախ է մտել, իրենք իրենցից են վախենում և այդքան հնարավորություն ունենալով, ոչ մի թիզ հող չկարողացան եր վերցնել, մի բան էլ՝ նորովի կորցրեցին:

Հայը ամուր ժողովուրդ է: Ասված է նրա մեջ քաջություն դրել: Սակայն Ասված փա, մի քիչ մշակվենք ու հավաքք ունենանք, մի քիչ բարիանանք ու միավորվենք, այն ժամանակ ավելին կրեսենք ու կվայելենք: Բայց հուսով եմ, որ այդպես էլ կլինի:

Երանի քեզանից նամակ սրանայի ու իմանայի, որ բոլորը լավ եք... Երանի լիակատար ու հաստատուն հաղթանակ լինեք... Երանի արդարության հաղթանակով խաղաղություն լինեք... Երանի մարդկանց մեջ սեր ու վստահություն լինեք... Երանի մեր ժողովուրդը մշակվեք...»:

Խաղաղության այս տասնամյակների ընթացքում Գևորգ Համբարձումյանի խոսքն ու օրինակը ներշնչել են ինձ, մեր հարազատներին ու բոլոր նրանց, ովքեր ճանաչել են Գևորգին: Մենք հպարտությամբ ենք հիշել Գևորգ Համբարձումյանին ու հաղթանակը բերած մեր մյուս հերոսներին: Ինչպիսի անպարտելի ոգի, հայրենասիրություն ու լավատեսություն ունեին մեր հերոսները այն ժամանակ և նաև այսօր: Եվ այդ ոգու շնորհիվ կերտվեց առաջին հաղթանակը և կլինի նաև երկրորդը: Այդ ոգու հիմքերը ոչ միայն ազգային անպարտելի բնավորության ու հավատքի մեջ են, այլ նաև նրա, որ մեր հերոսները կռվում են իրենց հայրենի հողի համար, մեր գործն արդար է ու աստվածահաճո և անպայման պսակվելու է հաղթանակով ու խաղաղությամբ:

Այսօր մեր զինվորների մեջ է ու նրանց ուժ է տալիս անցյալի հերոսների ոգին, հոգևոր ու գաղափարական այն հիմնասյունները, որոնք մեր ժողովուրդը դարբերվ ստեղծել է: Մենք ուժեղ ու անպարտելի ենք մեր մշակույթով ու դարավոր պատմությամբ, հոգևոր ու բարոյական բարձր արժեքներով, մեր հավատով, ամեն օր և ոչ միայն մարտադաշտում դրսևորվող միասնությամբ, նվիրումով, միմյանց նկատմամբ հոգատարությամբ: Այն ամենով, ինչը պահել ու պահում է մեր ժողովրդին:

Խոնարհում ու փառք մեր նորօրյա հերոսներին, որոնք իրենց երակներում զգում են անցյալի հերոսների ուժը, կրում են անպարտելի հայի հավերժական ոգին:

